

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Արևմտահայերեն բնագրերի ուսուցման դժվարությունները
դպրոցում

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Լիանա Սարգսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Տեղի Ար. Սարգսյանի անվան թիվ 1
միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Ալավերդյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզուն մտածողության գոյության, արտահայտության ձև է և կարևոր դեր է խաղում գիտակցության ձևավորման գործում: Լեզուն ժողովրդի միասնության մեծագույն առիավատյան է, որ տվյալ ազգի ճակատագիրն ունի, հիշողությունն ու հավատարմությունը, երբեմն տկարանալու և նորովի գորանալու հատկանիշները: Լեզուն է ներկան ու անցյալը վերաիմաստավորողը, ապագայի տեսլականի ձևավորողը:

Հայոց ոսկեդենիկ լեզուն էլ հայի ճակատագիրն ունի՝ բաժան-բաժան եղած, օտար լեզուների մրցակցությունից ազդված, բայց և համառորեն ապրող ու հարաստող:

Անցնելով դարերի փորձություններով՝ հայերենը բազմաշերտ դրսևորումներ է ձեռք բերել, ներառել մշակված երկու տարբերակներ՝ գրական արևելահայերենն ու արևմտահայերենը, որոնց, սակայն, զարգացման նույն ճակատագիրը չի վիճակվել:

Գրական արևելահայերենը դարձել է պետական, համընդհանուր հաղորդակցման, մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության լեզու, շատ է ուսումնասիրվել, աննախադեպ զարգացում ունեցել, և նրանով է ստեղծվել գեղարվեստական, գիտական հարուստ ժառանգություն:

Արևմտահայության զանգվածային տեղահանությունների ու հալածանքների պատճառով էլ արևմտահայերենի գործառական ոլորտն աստիճանաբար փոքրացել է, մասնատվել, գործառվել միայն տարբեր գաղթօջախներում: Սակայն այս պայմաններում էլ շարունակել է իր գոյությունը, ինքնուրույն վերելք ապրել արևմտահայության հասարակական-քաղաքական կյանքի պոլսական շրջանից՝ 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև անցյալ դարասկիզբ:

Այսօր միասնական երկխոսությունից զրկված են հայության երկու հատվածները, քանի որ արևմտահայերենն օրեցօր տկարանում է, դադարում հասկանալի լինել: Ավելին, ՅՈՒՆԵՍԿՕ-ն հայերենի այդ լեզվաճյուղը դասել է անհետացող լեզուների շարքին:

Պատճառը միայն պատմական իրադարձությունները չէին, դրան ավելացան նաև 1922 թ.-ի լեզվաշինարարության հունձը, «հայոց լեզու» ընդհանուր անվան տակ

միայն արևելահայերենը հասկանալն ու սովորեցնելն ինչպես դպրոցում, այնպես էլ համալսարաններում:

Հիմա շատերն արդեն չեն տիրապետում արևմտահայերենին, վատ գիտեն արևմտահայ գրականությունը, մշակույթը և այդպես աղավաղված փոխանցում են սերունդներին: Դիտարկումներից պարզ է դարձել, որ նոր սերունդը գրեթե չի ճանաչում արևմտահայ հեղինակներին, չի կարդացել բնագրերը և ծանոթ չէ լեզվաքերականական իրողություններին:

Վերջին տարիներին ինչպես Սփյուռքի, այնպես էլ Հայաստանի դպրոցներում հայերենի ուսուցման մակարդակը զգալիորեն նվազել է, և այս հանգամանքը մտահոգություն է պատճառել մտավորական ու պետական շրջանակներին: Հարցի համակողմանի վերլուծություններով նկատելի են դարձել մի շարք հիմնախնդիրներ, որոնցից մեկն էլ արևմտահայ լեզվի և գրականության նկատմամբ անտարբեր մոտեցումն է, թյուրընկալումը:

Այս փաստերը զուգադրելով ուսուցիչների մտահոգությունների հետ՝ սույն հետազոտական աշխատանքով կփորձենք վերհանել արևմտահայերենի ուսուցման, արևմտահայ բնագրերի ընկալման դժվարությունների պատճառները՝ որոշակի քայլեր առաջարկելով դրանց հաղթահարման ուղղությամբ:

Լեզվին տիրապետելն առաջին հերթին նշանակում է տիրանալ գրական լեզվի երկու դրսևորումներին, ճիշտ այնպես, ինչպես որ արել են մի կողմից Ստ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Բաֆֆին, Վ. Տերյանը, Հովհ. Թումանյանը, Ա. Բակունցը, Ե. Չարենցը, մյուս կողմից՝ Պ. Դուրյանը, Հ. Պարոնյանը, Սիամանթոն, Դ. Վարուժանը, Հ. Օշականը, Վ. Թեքեյանը: Ժողովրդի երկու հատվածները երբեք խնդիր չեն ունեցել հասկանալու Դուրյանին ու Տերյանին, Օսյանին ու Բակունցին: Այլ կերպ ասած՝ հայոց գրական երկու լեզուներն ազգային մեծ հարստություն են, որոնց տիրապետելն իսկ մարդուն դարձնում են հոգևոր մշակութային արժեքների կրող:

Լեզվի իմացությունը մեծապես իրականացվում է դպրոցում, իսկ ներկա ծրագրերով արևմտահայերենը խիստ անտեսված է թե՛ հայոց լեզվի, թե՛ գրականության դասագրքերում: Արևմտահայ լեզվի առանձնահատկություններն ընդհանուր ակնարկով ուսումնասիրվում են միայն ավագ դպրոցում՝ 11-րդ, 12-րդ

դասարաններում, խիստ հպանցիկ ձևով, 3-4 դասաժամի ընթացքում հետևյալ թեմաներով.

11-րդ դասարան

1. «Հայերենի երկու ճյուղերը՝ արևելահայերեն ու արևմտահայերեն»
2. «Արևտահայերենի հնչյունական համակարգը»
3. «Արևմտահայերենի բառապաշար»
4. «Արևմտահայերենի քերականական հիմնական տարբերությունները արևելահայերենից»

12-րդ դասարան

1. «Արևելահայերեն և արևմտահայերեն» (կես էջ)

Մինչդեռ արևմտահայ հեղինակների գործերին անդրադառնում ենք սկսած 8-րդ դասարանից: Աշակերտները սովորում են արևմտահայերենով հատվածներ, նույնիսկ անգիր անում՝ առանց հասկանալու, ուր մնաց թե՛ յուրացնելու: Փաստորեն, առանց իմանալու արևմտահայերենի հնչարտաբերական առանձնահատկությունները, բնագրերն արտասանում են նույն արևելահայերենի հնչողությամբ:

Դպրոցական դասագրքերում ընդգրկված արևմտահայ ստեղծագործությունները գրեթե միշտ էլ դժվար են ընկալվում, չափազանց քիչ կարդացվում: Աշակերտները սովորաբար խուսափում են ընթերցել նշված գործերը, և միայն ուսուցչի ուղղորդմամբ, արևելահայերեն մեկնաբանությամբ են մասամբ յուրացնում նյութը, հետզհետե նվազում է հետաքրքրությունը Դանիել Վարուժանի, Պետրոս Դուրյանի, Միսաք Մեծարենցի և մյուս գրողների նկատմամբ միայն այն պատճառով, որ չեն հասկանում լեզուն, լեզվաբերականական իրողություններն ու բառապաշարը: Մինչդեռ արևմտահայերենով ստեղծված շքեղ ու համաշխարհային մակարդակով գրականությունը, գիտական և պատմական աշխատությունները հանդիսանում են մեր հայ արժեհամակարգի հիմնասյուներից մեկը, որի խարխլումն արդեն իսկ վտանգավոր է: Հետևաբար խիստ կարևոր է, որ դպրոցականները գոնե նվազագույն հմտություններով կարողանան ընթերցել արևմտահայ բնագրերը, ընկալեն դրանք:

«Արևմտահայերենի ուսումնասիրությունը բնագրային աշխատանքների դասերին» թեմայով հոդվածում մակավարժ Ա. Վարդանյանը առաջարկում էր արևմտահայերենի ուսուցումը պարտադիր դարձնել միջին դասարաններում, ընդ որում՝ գործնական ճանապարհով՝ բնագրի վրա կատարվող աշխատանքների շրջանակներում:¹

Իսկապես, արևմտահայերենի առանձնահատկություններն առավել հստակ կլինեն բնագրային աշխատանքների միջոցով, մանավանդ, եթե դրանք ուղեկցվեն ժանանակակից տեխնոլոգիաների հնարավորություններով՝ առցանց բառարաններ, գրքեր, ձայնային պատումներ, հեղինակային ընթերցումներ, տեսանյութեր, երգեր և այլն:

Արևմտահայերենը, շատ ընդհանրություններ ունենալով արևելահայերենի հետ, բնականորեն էական տարբերություններ ունի, առանց որոնց իմացության երեխաները չեն կարող ընկալել իրենց կարդացածը:

Անդրադառնանք դրանցից մի քանիսին.

- Արևմտահայ ու արևելահայ հնչյունական հիմնական տարբերությունը պայթական բաղաձայնների մեծ խմբի մեջ ձայնեղ և խուլերի տեղաշարժերն են: Արևելահայերենի ձայնեղները՝ *բ, գ, դ, ձ, ջ*, արևմտահայերենում արտասանվում են որպես շնչեղ խուլեր՝ *փ, թ, ք, չ, ջ*: Դարերի ընթացքում պայթական բաղաձայնների խմբի եռաստիճան համակարգը արևմտահայերենում վերածվել է երկաստիճան համակարգի հետևյալ կերպ.

✓ Ձայնեղներ՝ պ, կ, տ, ճ, ծ

✓ Շնչեղ խուլեր՝ փ, ք, թ, չ, ց, նակ՝ բ, գ, դ, ջ, ձ

Ահա այս կանոնների իմացության դեպքում աշակերտները կկարողանան ճիշտ հնչողությամբ կարդալ բառերը: Օրինակ՝ *տրտունջքը* կարտասանեն *դրդունջք, Դուրյանը՝ Թուրյան*, և նրանց համար այլևս խորթ, հաճախ նակ զավեշտալի չի լինի հեռուստատեսությամբ լսել սփյուռքահայի խոսքը: Այսպես աշակերտները կզգան նակ արևմտահայերենի երաժշտականությունն ու ճոխությունը:

¹ Տե՛ս Վարդանյան Ա., Արևմտահայերենի ուսումնասիրությունը բնագրային աշխատանքների դասերին, «Գիտական տեղեկագիր», 2017, Պրակ Բ, №1, Գյումրի, էջ 181-188:

- Գրական արևմտահայերենում գոյականները 6 հոլով ունեն՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական, սակայն ունեն 4 ձև միայն, որովհետև ուղղականն ու հայցականը, տրականն ու սեռականը ձևով նույնն են: Ներգոյական հոլովն էլ արտահայտվում է սեռականով և մեջ կապով: Օրինակ՝ Արսենը քաղաքին մեջ կը բնակի:

Հետևաբար, բնագրային ուսումնասիրության ժամանակ աշակերտները կհասկանան, թե ինչու է արևմտահայերենում անձի դեպքում ուղիղ խնդիրը դրվում հայցական հոլովով:

- Գոյականի հոգնակի ձևերը ենթարկվում են *ու* հոլովման՝ *տուներու, մարդերու*:

Միշտ դժվարությամբ էին երեխաները ներկայացնում բայի ժամանակները արևմտահայ բնագրերում, նաև՝ *նա-նե*-ի տարբերությունները, ժխտական դերանունների հետ դրական խոնարհում օգտագործելը, կրավորականի կազմությունը միայն *իչ* վերջավորությամբ և նմանատիպ շատ իրողություններ:

Օրինակ՝ Կը գրէ մայրս - Գրում է մայրս: *Կը գրէ* ժամանակաձևը ներկա է, ոչ թե արևելահայերենի նման ապառնի:

Իհարկե, տարբերությունները կարելի է երկար թվարկել, բայց կրկին խոսելով արևմտահայ բնագրերի ընկալման դժվարությունների մասին՝ նշեմ, որ հատկապես բառապաշարի տարբերություններն են որոշիչ դեր խաղում: Օրինակ՝ Ջոհրապի նովելներից մեկում նկարագրվում է մի դրվագ, որտեղ հերոսը, պահարանը դրած թևի տակ, տուն էր գնում: Բառի բացատրությունը չիմանալու դեպքում իսկապես տարօրինակ է, սակայն երբ պարզում են, որ պահարանն արևմտահայերենում ծրար է նշանակում, դրվագը հասկանալի է դառնում:

Ներկայացնենք դրանցից մի քանիսը.

- Միայն արևմտահայերենում գործածվող բառեր՝ *հոս, հոդ, հոն, ասիկա, աղուոր, լաճ, էրիկ, նու՝ հարս, լիցք՝ տոլմա, գուճ՝ ծունկ, կռուփ, փոստալ* և այլն:
- Բառեր, որոնք արևելահայերենին նման են ձևով, սակայն իմաստային պլանում տարբերվում են: Օրինակ՝ *գրագետ-գրող, ախոյան-առաջամարտիկ, լաթ-զգեստ, գնացք-ընթացք, անթել-ռադիո, վարիչ-վարորդ* և այլն:

- Արևմտահայերը միտում է հայացնել օտար բառերը. *ավտոմեքենա-ինքնաշարժ, ռադիո-ձայնասփյուռ, ակադեմիա-կաճառ, կոնյակ-բարկոզի, վիտամին-կենսահյութ...*

Փաստորեն լեզվի իմացությունը հեշտացնում է բնագրի բովանդակության ընկալումը, խթանում հետաքրքրությունն ու ընթերցելու, ընթերցածը վերարտադրելու կարողությունը: Իսկ այս ամենին հասնելու համար լավագույն միջոցներ կարող են հանդիսանալ.

1. արևմտահայերենի ուսուցումը՝ սկսած միջին դպրոցից,
2. փորձնական հոսքային դասավանդումը,
3. դասագրքային համապատասխան նյութերի ավելացումը,
4. ուսուցիչների վերապատրաստումների իրականացումը արևմտահայերենի ուղղությամբ,
5. տեսական-գործնական կապի ապահովումը դասապրոցեսում,
6. բնագրային աշխատանքները,
7. ձայնային պատումների, գրական ընթերցումների կիրառությունները,
8. պետական դիրքորոշումը՝ ԶԼՄ-ով արևմտահայ հաղորդումների ցուցադրում:

Վերջում էլ հավելենք, որ 2008 թ.-ին «Մփյուռք» գիտաուսումնական կենտրոնի աջակցությամբ փորձնական ծրագրով որոշ դպրոցներում մեկ ուստարվա կտրվածքով իրականացվել է արևմտահայերենի դասավանդում, և վերլուծությունները ցույց են տվել, որ իսկապես ընկալման մակարդակը զգալիորեն փոխվել էր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լեզվի երկու ճյուղերի համաչափ իմացությունն ու ուսումնասիրությունը չափազանց կարևոր են, ուստի հայոց լեզվի, գրականության ուսուցիչների առաջնային խնդիրներից պիտի լինի կիրառել այնպիսի մեթոդներ, մշակել ծրագրային այնպիսի քայլեր, որոնց միջոցով արևմտահայ գրական արժեքներն ուսումնասիրելիս այլևս դժվարություններ չեն լինի կամ հնարավորինս կնվազեն:

Գրականության ցանկ

1. Վարդանյան Ա., Արևմտահայերենի ուսումնասիրությունը բնագրային աշխատանքների դասերին, «Գիտական տեղեկագիր», 2017, Պրակ Բ, №1, Գյումրի, էջ 181-188: